

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՄՐՑԱՆԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) մրցանակի (այսուհետ՝ Մրցանակ) շնորհման, մրցանակաբաշխության հետ կապված աշխատանքները համակարգող խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) և Մրցանակի հայցման հայտերը գնահատող մասնագիտական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմը, գործառույթներն ու աշխատանքների կազմակերպման կարգը:

2. Մրցանակներ շնորհվում են հետևյալ բնագավառներում.

- 1) ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ,
- 2) քիմիա, կյանքի և երկրի մասին գիտություններ,
- 3) հասարակական և հումանիտար գիտություններ:

3. Մրցանակը շնորհվում է տվյալ բնագավառում կարևորագույն հիմնարար և/կամ կիրառական գիտական և/կամ գիտատեխնոլոգիական արդյունքների, ապրանքայնացման պատրաստ կամ ներդրված կիրառական մշակումների, արժեքավոր գործի, հայտնագործության կամ աշխատանքների շարքի (այսուհետ՝ Գիտական արդյունք) համար:

4. Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, քիմիայի, կյանքի և երկրի մասին գիտությունների բնագավառներում շնորհվում է երկուական Մրցանակ՝ հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների ոլորտներում, իսկ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում՝ մեկ Մրցանակ:

5. Մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ՝ հայտերի ներկայացման ժամկետին նախորդող 5 (հինգ) և 10 (տասը) տարիների ընթացքում՝

համապատասխանաբար հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների պարագայում ձեռք բերված Գիտական արդյունք(ներ)ի համար:

6. Մրցանակի շնորհման մրցույթին ներկայացվող Գիտական արդյունք(ներ)ի համահեղինակության ժամանակ Մրցանակի հավակնորդների թիվը չպետք է գերազանցի 5 (հինգ)-ը: Այդ դեպքում մրցանակի գումարը հավակնորդների միջև բաշխվում է հավասարապես կամ ըստ կողմերի միջև գրավոր, փոխադարձ համաձայնությամբ սահմանված կարգի:

7. Մրցանակները յուրաքանչյուր բնագավառի համար շնորհվում են համանուն վկայագրի և դրամական պարգևի ձևով: Յուրաքանչյուր Մրցանակի դրամական պարգևի չափը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

8. Մեկ անգամ Մրցանակ ստացած անձն իրավունք չունի երկրորդ անգամ հավակնել այն ստանալու: Սույն սահմանափակումը վերաբերում է ինչպես անհատ հավակնորդին, այնպես էլ համահեղինակների խմբին:

9. Մահացած դափնեկրի վկայագիրը հանձնվում է նրա ընտանիքին, իսկ դրամական պարգևը փոխանցվում է ժառանգներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԽՈՐՀՈՒՐԴԸ

10. Մրցանակի շնորհման աշխատանքների ընդհանուր համակարգման նպատակով ստեղծվում է Խորհուրդ, որի անհատական կազմը հաստատվում է ՀՀ ԳԱԱ նախագահի կողմից: Խորհուրդը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ՀՀ ԳԱԱ կանոնադրության, ՀՀ ԳԱԱ նախագահի հրամանների և սույն կարգի համաձայն:

11. Խորհուրդը բաղկացած է 6 (վեց) անդամից.

- 1) ՀՀ ԳԱԱ նախագահ՝ Խորհրդի նախագահ,
- 2) ՀՀ ԳԱԱ նախագահի գիտության և տեխնոլոգիաների գծով տեղակալ՝ Խորհրդի նախագահի տեղակալ,
- 3) ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար,
- 4) ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպության աշխատակից՝ Խորհրդի քարտուղար (համաձայնությամբ),

5) ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (համաձայնությամբ),

6) Մրցանակը ֆինանսավորող կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ):

12. Խորհրդի գործառույթներն են.

1) ապահովել Հանձնաժողովների բնականոն աշխատանքը և ձեռնարկել միջոցներ լուծելու աշխատանքի ընթացքում ծագած խնդիրները՝ խորհրդակցելով տվյալ Հանձնաժողովի նախագահի հետ,

2) զանգվածային լրատվության միջոցներով հայտարարել առաջիկա մրցանակաբաշխության ու մասնակցության համար անհրաժեշտ դիմում-հայտերի ներկայացման մասին,

3) հաստատել Հանձնաժողովների կողմից առաջադրված Մրցանակի դափնեկիր-թեկնածուներին: Հիմնավոր պատճառ(ներ)ի դեպքում չհաստատել Հանձնաժողով(ներ)ի կողմից ներկայացված Մրցանակի դափնեկիր-թեկնածու(ներ)ին և կազմակերպել համապատասխան հայտ(եր)ի անկախ գիտական և գիտատեխնիկական փորձաքննություն: Անկախ փորձաքննության եզրակացությունը վերջնական է,

4) զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել Մրցանակի դափնեկիրների ցանկը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

13. Մրցանակի համար ներկայացված հայտերի գնահատման և դափնեկիր-թեկնածուների ընտրության գործընթացի կազմակերպման համար, ըստ Մրցանակի շնորհման բնագավառների/ոլորտների, ստեղծվում է 5 (հինգ) Հանձնաժողով՝ երկուական ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների ու քիմիայի, կյանքի և Երկրի մասին գիտությունների բնագավառներում՝ հիմնարար և կիրառական բնույթի հետազոտությունների ոլորտներում, և մեկը՝ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում:

14. Հանձնաժողովները գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ՀՀ ԳԱԱ կանոնադրության, ՀՀ ԳԱԱ նախագահի հրամանների, Խորհրդի ցուցումների և սույն կարգի համաձայն:

15. Հանձնաժողովները բաղկացած են 7 (յոթ)-ական անդամներից:

16. Հանձնաժողովների նախագահներն ու անդամները նշանակվում են ՀՀ ԳԱԱ նախագահի կողմից 5 (հինգ) տարի ժամկետով:

17. Հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել բարձր գիտական վարկանիշ ու հեղինակություն ունեցող գիտնականներ, օտարերկրյա գիտնականներ, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ, պետական կառավարման մարմինների և տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովների անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

18. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները, ձևավորում է նիստերի օրակարգը և նախագահում նիստերը,

2) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթեր,

3) առաջարկ է ներկայացնում ՀՀ ԳԱԱ նախագահին՝ փոխարինել Հանձնաժողովի այն անդամին, որը չի կատարում սույն կարգից բխող իր գործառույթները:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

19. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

20. Հանձնաժողովի նախագահը որոշում է նիստի անցկացման օրը, ժամն ու վայրը, ինչպես նաև նիստի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան նիստի գումարումից 5 (հինգ) օր առաջ տեղեկացնում հանձնաժողովի անդամներին էլեկտրոնային փոստով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծանուցման այլ եղանակներով:

21. Անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրվել արտահերթ նիստ՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ կամ անդամների մեծամասնության հիմնավորված առաջարկի դեպքում՝ նախապես համաձայնեցված օրակարգով:

22. Հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են նրա անդամների կեսից ավելին:

23. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան Հանձնաժողովի ցուցակային

կազմի 40%-ը: Հավասար ծայների դեպքում Հանձնաժողովի նախագահի ծայնը վճռորոշ է:

24. Հանձնաժողովն իրավասու է չընդունել Մրցանակի համար ներկայացված հայտը, եթե այն չի բավարարում սույն կարգի պահանջները:

25. Հանձնաժողովի գործառույթներն են.

1) ուսումնասիրել Մրցանակի հայցմանը ներկայացված հայտերը և կատարել ընտրություն,

2) իրականացնել Մրցանակի հայցման հայտերի գիտաչափական (գումարային առավելագույն գնահատականի 20%) և գիտական, իսկ կիրառական բնույթի հայտերի դեպքում՝ գիտաարտադրական ու տնտեսագիտական փորձագիտական (գումարային առավելագույն գնահատականի 80%) գնահատում՝ ըստ ՀՀ ԳԱԱ նախագահի կողմից հաստատված ձևաթղթերի: Փորձագիտական գնահատման ժամանակ, անհրաժեշտության դեպքում, ներգրավել նաև անկախ փորձագետների, այդ թվում՝ օտարերկրյա,

3) Մրցանակի հայցման հայտերի գնահատման արդյունքում ընտրել առավել բարձր ցուցանիշներով 3 (երեք) հայտ, որոնցից էլ փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել լավագույնը և ներկայացնել Խորհրդին: Հայտերի գնահատման ու ընտրության ժամանակ մնացյալ պայմանների հավասարության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երիտասարդ գիտնականներին,

4) Խորհրդին՝ Մրցանակի հայցման լավագույն թեկնածուին ներկայացնելիս միաժամանակ պետք է տրամադրել նաև բոլոր հայտերի ուսումնասիրության և քննարկման արդյունքների մասին ամփոփ տեղեկանք: Հանձնաժողովի կողմից Մրցանակի հայցման հայտերին տրված գնահատականները գաղտնի են:

V. ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

26. Մրցանակի հայտերի ներկայացման ձևերը.

1) հայտեր կարող են ներկայացնել գիտական և/կամ գիտակրթական և/կամ գիտաարտադրական կազմակերպությունների աշխատակիցները կամ դրանց խմբերը՝ կազմակերպության ղեկավարի կամ գիտական խորհրդի երաշխավորությամբ: Խմբերի

կազմում կարող են ներգրավվել նաև տվյալ հայտի շրջանակում համատեղ աշխատանքներ իրականացրած օտարերկրյա գիտնականները,

2) հայտը ներկայացնում է անձամբ հեղինակը, իսկ համահեղինակության դեպքում՝ համահեղինակներից մեկը՝ մյուսների համաձայնությամբ: Յուրաքանչյուր հայտ կարող է ներկայացվել միայն մեկ անվանակարգում,

3) հայտի համահեղինակների թիվը չպետք է գերազանցի 5 (հինգ)-ը: Համագործակցության արդյունքում ձեռք բերված գիտական, գիտաարտադրական և/կամ առևտրայինացման ենթակա արդյունք(ներ)ի ներկայացման ժամանակ պետք է տրամադրել հստակ հիմնավորում թեկնածու(ներ)ի մասնակցության աստիճանի վերաբերյալ,

4) հայտում կարող են ներկայացվել միայն այն արդյունքները, որոնք առաջին անգամ հրատարակվել, հրապարակվել կամ ապրանքայինացման տարբեր աստիճաններ են անցել Մրցանակ ստանալու համար հայտերի ներկայացման ժամկետին նախորդող 5 (հինգ) և 10 (տասը) տարիների ընթացքում՝ համապատասխանաբար հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների դեպքում: Հայտում կարող են ընդգրկվել նախորդ տարիների մրցույթներին ներկայացված, բայց հաղթող չճանաչված հայտերի արդյունք(ներ)ը: Հայտում չեն կարող ընդգրկվել կատալոգները, բառարանները, փաստաթղթերի ժողովածուները, հուշագրությունները, դասագրքերը, թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունները: Հայտ չի կարող ներկայացվել մահացած անձի անունից, այդ թվում՝ վերջինիս իրավահաջորդի կամ ժառանգի կողմից,

5) հայտը պետք է ընդգրկի՝ ներկայացված Գիտական արդյունք(ներ)ի նկարագիրը, հեղինակ(ներ)ի կենսագրական տվյալները, կրթության ու մասնագիտական գործունեության մասին տեղեկությունները (CV), հրապարակումների ցանկը, իսկ կիրառական բնույթի հայտերի դեպքում՝ նաև արդյունք(ներ)ի (արտադրանք կամ մշակում) ապրանքայինացման աստիճանը հիմնավորող փաստաթղթեր: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը հայտատուից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, որոնք կնպաստեն հայտի գնահատմանը,

6) հայտին պետք է կցվեն նաև հայտի համապատասխան բնագավառի երեք փորձագետի եզրակացությունները (կարծիքները), ընդ որում՝ նրանցից առնվազն մեկը պետք է լինի օտարերկրյա փորձագետ: Եզրակացությունում պետք է հիմնավորվի, թե ինչու է հայտն արժանի Մրցանակի:

7) եթե հայտում ներկայացված են Խորհրդի և/կամ Հանձնաժողովների անդամների կամ նրանց ղեկավարությամբ կամ համահեղինակությամբ ձեռքբերված Գիտական արդյունք(ներ), ապա այդ անձը չի կարող մասնակցել տվյալ հայտի վերաբերյալ Խորհրդի և Հանձնաժողովի աշխատանքներին, որոշումների կայացմանը:

27. Հայտերի ներկայացման ու գնահատման ժամկետները.

1) երկու տարին մեկ անգամ, մարտի վերջին տասնօրյակում Խորհուրդը զանգվածային լրատվության միջոցներով հայտարարում է առաջիկա մրցանակաբաշխության ու դիմում-հայտերի ընդունման մասին,

2) դիմում-հայտերն ընդունվում են ապրիլի 1-ից մայիսի 31-ը, մինչև ժամը 17:30-ը,

3) հայտերի ուսումնասիրությունը Հանձնաժողովների կողմից կկատարվի դրանց ընդունումից հետո, մինչև հոկտեմբերի 1-ը:

28. Մրցանակի հանձնման արարողությունը կկազմակերպվի տվյալ տարվա նոյեմբերի 10-ին՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրման օրը:

29. Մրցանակի հայցման համար դիմում-հայտերի ընդունումը մերժվում է, եթե ներկայացվող փաստաթղթերում առկա են կեղծ տեղեկություններ կամ չեն պահպանվել դիմում-հայտերը ներկայացնելու համար սահմանված պայմանները: Հայտը չպետք է պարունակի արդյունք(ներ), որի(որոնց) համար հեղինակ(ներ)ը կամ այլ անձինք արդեն ստացել են Մրցանակ կամ այն(դրանք) վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում արժանացել է(են) ՀՀ որևէ այլ պարգևի (ՀՀ Նախագահի մրցանակ, ՀՀ պետական մրցանակ, ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակ և այլն):

30. Եթե տվյալ բնագավառում/ոլորտում Հանձնաժողովը չի ընտրել Մրցանակ ստանալու թեկնածու(ներ)ի, ապա Խորհրդի որոշմամբ այն կարող է շնորհվել մեկ այլ բնագավառում/ոլորտում կամ փոխանցվել հաջորդ մրցանակաբաշխություն՝ ավելացնելով նույն բնագավառի/ոլորտի համար նախատեսված Մրցանակների թիվը: